Տ. ՆՈՒՐՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1948 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Հայկական ազգային վարժարանում:

1964-1966 թթ. հաճախել է Անթիլիասի (Լիբանան) Կիլիկյան Աթոռի Դպրեվանք, որից հետո՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարան:

1968 թ., ավարտելով վարժարանը՝ ձեռնադրվել է սարկավագ :

1971 թ., ձեռամբ երջանկահիշատակ Պատրիարք Տ. Եղիշե արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Նուրհան աբեղա: Ձեռնադրվելուց հետո նշանակվել է Ժառանգավորաց վարժարանի փոխտեսուչ:

1972 թ. մեկնել է Ժնև՝ իբրև Ճվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ: Մեկ տարի անց ստանձնել է Իսրայելի հայոց հովվության պաշտոնը:

1979-1982 թթ. եղել է Հոլանդիայի հայոց հոգևոր հովիվ:

1982 թ. ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի հրավերով մեկնել է Նյու Յորք: Այստեղ հոգևոր սպասավորությանը զուգընթաց ուսանել է տեղի եպիսկոպոսական Ընդհանուր աստվածաբանական ճեմարանում:

1985 թ. նշանակվել է Սփրինգֆիլտ քաղաքի (Մասաչուսեթս) հայոց հոգևոր հովիվ:

1993 թվականից հոգևոր հովվի պաշտոն է կատարել Տեխասի Հյուսթոն քաղաքում:

1998 թ. նոյեմբերի 10-ին Սրբոց Հակոբյանց միաբանության կողմից ընտրվել է Երուսաղեմի Ս. Աթոռի լուսարարապետ և 1999 թ. հունվարի 5-ից անցել պաշտոնի կատարմանը:

1999 թ. դեկտեմբերի 19-ին, ձեռամբ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: